



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

թիւ 33.

ՊԱՆՏՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆԻ ԱԶԴԱՅԻՆ ՊԱՏՐԻԱՐԲԱՐԱՆԻ

ԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆԻ
ԱԶԴԱՅԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՈՅ

(ԲԱՏՈՒՄ 1870 ԱՄԻՆ

ՆԻՍՏ ԵՐԵՍՈՒՆԵԻԵՐԵՔԵՐՈՐԳ

29 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1871



ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Յ. ՄԻԻԼԵՆՏԻՍԵԱՆ

— 1871 —

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

ԲԱՑՈՒՄ 1870 ԱՄԻՆ

ՆԻՍՏ ԼԳ.

29 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1871

ՆԱԽԱԳԵՏ. — ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՐԻԱՐԿ

ԱՏԵՆԱԳԵՏ. — ԱՂԱԲԷԿԵԱՆ Ս. ԷՖԷՆՏԻ (Բ. Ատենապետ)

ԿԱՐԳ ԽՆԴՐՈՑ

- 1° Տեղեկագիր Գաւառական հարստահարութեանց քննիչ Յանձնաժողովոյ :
- 2° Ընտրութիւն Ազգ. Վարչութեան կրօն. ժողովոյ :
- 3° Ատենական կանոնադրութիւն :
- 4° Համարատութիւն Ազգ. Վարչութեան Քաղ. ժողովոյ :
- 5° Վերաքննութիւն Սահմանադրութեան. — Գլուխ Ա :
- 6° Կեդրոնացումն եւ Ազակեղրոնացումն :

Ատենապետ էֆ. ատենը բացաւ ժամը 7 1/2ին 'ի ներկայութեան 43 երեսփոխանաց , որոց թիւը վերջէն 67ի յանգեցաւ :

Ատենապետ էֆ. յայտնեց ժողովոյն թէ՛ ութն օրուան միջոց բաւական եղած չէր նախընթաց նստի ատենադրութիւնը խմբադրել եւ միանգամայն տպեալ ներկայացնել երեսփոխանաց , եւ թէ հետեւաբար յաջորդ անգամուն կը մնար անոր ընդունելութիւնը :

Յետոյ հրատարագիր մը ներկայացուց , զոր կ'ուղղէր եկեղեցական երեսփոխաններէն Ամեն. Տ. Արիստակէս Արքեպիսկոպոս , վատառողջութեան պատճառաւ 'ի ժողովն յաճախելու անկարողութիւնը ցաւօք սրտի խմացնելով :

Այս հրատարականի խնդիրը մեծազոյն մասի ղոյացման վերապահելով Ատենապետ էֆ. յա-

րեց թէ՛ Այվառեան Մատթէոս էֆ. « թէպէտ անկողնոյ չեմ ծառայեր այլ ընդ դարմանաւ հիւանդ եմ » ըսելով ժողովոյ չեկած եւ անցեալ նստէն [միջնարանութեան ենթարկեալ ու այս նստի մէջ շարունակելի զինուորական տրոց խնդրոյն վրայ երկարօրէն դիտողութիւն մ'ըրած է զբաւոր , եւ խնդրած՝ որ կարգացուի 'ի լուր ժողովականաց . սակայն ըստ որում բացակայ երեսփոխանաց զբաւոր դիտողութեանց ընդունելի թէ մերժելի ըլլալը խնդիր մ'է արդէն , որոյ որոշումը ժողովն Ատենական կանոնաց հաստատութեան ատենին թողած է , ուստի , ըսաւ Ատենապետ էֆ. , այսպէս ներկայ չեղող երեսփոխանաց գրութեանց վրայ առ այժմ չը խօսուիր :

Հուսկ ուրեմն ժողովոյ ուշադրութիւնը զին-

ւորական տրոց խնդրոյն վրայ հրաւիրելով, որ նախորդ նստի որոշման հետեւութեամբ խընդ- բոց կարգին մէջ առաջին դասակարգեալ էր, խօսքը Պէկեան էֆ.ի տուաւ նոյն նստի խօսից կարգին մնացորդին համեմատ :

Պէկեան Թ. էֆ. — Զինուորական տրոց խընդ- բոյն վրայ խօսելէ յառաջ թո՛ղ ներէ ինձ ժո- ղովն որ՝ զիտողութիւն մ'ընեմ Սյլատեան էֆ.ի ընթացքին վրայ :

Այլատեան էֆ. հիւանդութիւն պատճառելով 13 նստերէ աւելի է որ՝ ժողովէս խոյս կուտայ եւ մեք պարզմտաբար կ'ընդունինք իր ցուցած պատճառը, մինչդեռ ժողովս օրէնք մ'ունի հաս- տատած բացակայութեանց համար, եւ այդ օ- րէնքը չարաչար կը պատժէ եւ դուրս կը ձգէ երեք անգամ շարունակ ժողովէս բացակայ մը- նացող երեսօխտանքը, թէ եւ անխուսելի պատ- ճառներէ հարկադրեալ ըլլան : Եթէ օրէնքն ար- դար է՛, ամեն ոք պէտք է՝ անոր արամադրու- թեան ենթակայ լինի :

Գիտել կուտամ ժողովոյն որ, Այլատեան էֆ. ճարպիկ միջոց մը կը գործածէ ըսելով թէ՛ «թէ- պէտ անկողնոյ չեմ ծառայեր, այլ ընդ դարձա- նաւ եմ» : վասն զի շատերու հետ ես ալ կրնամ հաստատել որ՝ ամեն օր, կարելի է այսօր ալ, Զրադանի պալատն երթալ կը շարունակէ, որոյ շինութեան մէջ պաշտօն ունի : մինչդեռ շատ մը նստերէ ՚ի վեր մի անգամ միայն տեսանք զինքը մեր մէջ, եւ այն ալ երբ « կ'ըզրոնացում եւ ապակեղորոնացում » խնդիրը կը յուղուէր :

Ուստի ըստիս իր ըրածը կեղծիք մ'է եւ զեղծ- մունք օրինաց դէմ : Կառաջարկեմ հետեւաբար ու կը պահանջեմ որ՝ կամ գայ նիստ ստնու մեր մէջ, կամ հրաժարեալ համարուի :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. էֆ. — Եթէ Պէկեան էֆ.ի ըսածներն ստոյգ են, Այլատեան էֆ.ի ըրածը խաբէութիւն մ'է առ ժողովն, եւ այսպէս ըլլալ :

ՄԱԶԼՈՍԵԱՆ Յ. էֆ. — Պէկեան էֆ.ի զիտո- ղութիւնները կրնան ճիշդ ըլլալ, սակայն կա- րելի չէ մի՞թէ որ Այլատեան էֆ. թէպէտ դարմանի ներքեւ, կարող ըլլայ իւր անձնա- կան գործերը շարունակել, բայց անկարող ժողովոյս ներկայանալով վիճարանութեանց մասնակցել :

ՈՍԿԱՆ Յ. էֆ. — Ես այսչափ միայն տեղեկու- թիւն կրնամ տալ որ, հինգ տարի յառաջ՝ երբ Այլատեան էֆ. կուրծքի հիւանդութենէ կը նեղուէր՝ զանի խնամող բժիշկն արգիլեց ի- րեն բարձրածայն եւ շարունակ խօսիլ : մի՞

դուցէ նորէն երեւան ելած ըլլայ այդ հիւան- ղութիւնը :

ԽՕՃԱՍԱՐԵԱՆ Օ. էֆ. — Պէկեան էֆ. նոր խնդիր մը կը յարուցանէ եւ դուցէ իրաւունք ունենայ : ուստի կառաջարկեմ որ նստին վեր- ջը՝ բացակայութեանց խնդրոյն կարգին՝ այս խնդիրն յուղուի :

ԱՐՇԱԿ Յ. էֆ. — Կը կրկնեմ Օդաէն էֆ.ի խօս- քը :

Ատենապետ էֆ. կը զադրեցնէ այս խնդիրն յուղել, Օդաէն էֆ. ի առաջարկութեան հա- մեմատ՝ նստին վերջին թողով զայն, եւ ժողո- վոյ ուշադրութիւնը զինուորական տրոց խընդ- բոյն վրայ կը դարձունէ :

ՏԵՂԵԿԱԳԻՐ ԳԱՒԱՌԱԿԱՆ ՀԱՐՍԱՀԱՐՈՒԹԵԱՆՅ ՔՆՆԻՉ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎՈՅ ՄԱՍՆ Բ. — ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆ ՏՈՒՐԻՔ (Պէտէլը Աւերէյէ)

Անցեալ նստին սկսեալ վիճարանութիւնը շա- րունակեցաւ :

Զինուորատուութեան դէմ խօսեցան, Տ. Ղե- ւոնդ Վրդ. Փիրղալէմեան, Թադէոս էֆ. Պէկե- ան, Յակոբ էֆ. Ոսկան, Տ. Խորեն Վրդ. Կի- րոյեան, Տ. Խորեն Վրդ. Երուսաղիմայ Փոխանորդ եւ Տ. Յովհաննէս Քնն. Մկրեան Պատրիարքական Փոխանորդ :

Իսկ ՚ի նպատտ խօսեցան, Քրիստոստուր էֆ. Ղաղարոսեան եւ Ստեփան էֆ. Փախաղեան :

Երեսօխտանաց ուսանք ալ ինչպէս եւ ընդ- զիմախօսից մեծադոյն մասն՝ առ այժմ այս խնդրոյն հա մնալն առաջարկեցին :

Ժողովը միաձայն որոշեց, իբր անժամանակ առ այժմ ՚ի բաց դնել զինուորատուութեան խնդիրը :

Ատենապետ էֆ. Տեղեկագրին առաջարկած միւս դարձաններուն անցնելէ յառաջ՝ զիտել տալով որ զինուորատուութեան խնդրոյն իբր դարման հարստահարութեանց՝ Ընդհ. ժողովոյ մէջ յուղուելուն դէմ բաւական թուով երես- փոխանք ղժղոնութիւն յայտնեցին, առա- ջարկեց ժողովոյն ուշի ուշով նկատողութեան առնուլ եւ որոշել նախապէս թէ՛ պատշաճ կը համարի՞ Բ. Կրան վերաբերեալ դարձանները մի առ մի յուղել իր Ատենին մէջ, եթէ ոչ :

ՏՕԳԹ. ՌԱՅԱՅԵԼԵԱՆ ԷՖ. — Կեռ խել մը տառապանաց դարձաններ կան առաջարկեալ մեր ըննութեան, եթէ այդ դարձաններն ամբողջ

Քաղ. ժողովոյ յանձնել հարկ լինէր, Ընդհ. ժո- ղով գումարելու ի՞նչ պէտք կար : Քսա իս Ընդհ. ժողովը կրնայ իւր մէջէն մասնաժողովի մը յանձնել, բայց եթէ իրեն եկած այսպիսի խնդիր մը բոլորովին Քաղ. ժողովոյ դարձունէ, իւր գոյութիւնն իսկ ծիծաղական բան մ'եղած կըլլայ :

ԱԼԱՃԱՃԵԱՆ Զ. էֆ. — Կը ձայնակցիմ Ռա- ֆայէլեան էֆ.ի խօսքերուն :

ԽՕՃԱՍԱՐԵԱՆ Օ. էֆ. — Ես ալ համամիտ եմ Ռաֆայէլեան էֆ.ի առաջարկութեան եւ իբր սկզբունք կընդունիմ, սակայն միջոցներուն զալով պիտի տարբերինք : Այդ առաջարկու- թեան գործադրութիւնն Եւրոպիոյ համար կըր- նայ ըլլալ, ուր ժողով մ'ունի լիազօր իշխա- նութիւն վիճարանութեան ենթարկեալ խնդիր- ները ժխտելու կամ ընդունելու : Քանի որ Ընդհ. ժողովը չունի այն ձեւնհաս իշխանութիւնը եւ քանի որ խնդիրն օրէնսդրութեան եւ քաղա- քագիտութեան վրայ է եւ Քաղ. ժողովն ըն- թացիկ գործոց տէրն է, կառաջարկեմ տեղե- կագիրն յանձնել Քաղ. ժողովոյ, եկող նստին նորէն մեզի դարձնելու պայմանաւ, եւ այն ա- տեն տեսնենք թէ՛ ո՞ր կէտին վրայ եւ ի՞նչ շա- փաւորութիւն պիտի առաջարկէ մեզ : Ապա թէ ոչ՝ առնանադրութեան թերթեր պիտի լեցնենք միայն եւ ցուցնենք աշխարհի թէ՛ Հայ ազգը կրցեր է խորհիլ եւ ուզեր է թէպէտ գործել, բայց ոչ առնն է զիտցեր եւ ոչ եղանակը :

ԱՂԱՐԵՔԵԱՆ Մ. էֆ. — Ես խօսք կուզեմ, տեղեկագրին վրայ մի ընդհանուր տեսութիւն ընելու մտօք :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Կեռ խել թէ միւս դարձան- ներուն վրայ ալ վիճարանելու արամադիրներ կան : բայց եթէ սկսինք ալ վիճարանութեան, չը պիտի կրնանք այսօր վերջացնել, զի ժամա- նակն անցած է : Ուստի ժողովոյն կը հարցնեմ թէ՛ կ'ուզէ՞ միւս դարձանաց վրայ վիճարանու- թիւն բանալ, յառաջիկայ նստին :

ՆԱԽԱԳԱՀ ՍՐՏԱԶԱՆ. — Քանի մը խօսք՝ ալ ես ընեմ : Ընդհ. ժողովոյ մէջ դարձաններուն վրայ վիճարանել կարծեմ կը նշանակէ լոյս տալ, որմէ Քաղ. ժողովն օգուտ քաղէ, երբ տեղեկագիրն իրեն երթայ : բայց Պատրի- արքարան եկած թղթերուն մէջ լոյսն ինքնին կը փայլի : Ընդհ. ժողովոյ մէկ երկու նիստ հա- ղու կը բաւեն իր ըննութիւնն աւարտել եւ տե- ղեկագիրը Քաղ. ժողովոյ զրկել. ան ալ պիտի խոր- հրդածէ անուշտ, եւ այսպէս դործը պիտի երկա-

րածդի մինչ ՚ի դարուն : Երկայն քըն- նութիւնները՝ վիճարանութիւնները լաւ են, վասն զի հետզհետէ նոր լոյսեր, նոր լաւ մի- ջոցներ կը յղանան, սակայն ո՞վ կրնայ երաշ- խաւորել որ՝ բարեպատեն ժամանակը նոյնը պիտի մնայ, մինչեւ որ դուք ձեր վիճարա- նութեանց վերջ տաք : Ժամանակէն օգուտ քաղելու ենք, պատենութիւնը փախցնելու չենք : Ուստի ես կառաջարկեմ որ՝ Յանձնաժողովն հաճի միանալ Քաղ. ժողովոյ հետ, որպէս զի բանակցութեամբ լոյսեր զան յերեւան : Եւ եթէ երեսօխտաններէն զանունն այնպիսիք որ տե- ղեկութիւններ կարող ըլլան տալ, թո՛ղ հը- բամեն, Քաղ. ժողովը զանոնք սիրով կըն- դունի :

Տ. ՀՄԱՏԵԱԿ ՎՐԳ. — Կը կրկնեմ Սրբազան Հօր առաջարկութիւնը :

ԵՈՒՍՈՒՑԵԱՆ Տ. էֆ. — Սրբազան Հօր առա- ջարկութիւնն երրորդելէ առաջ սա յիշեցնեմ որ, դաւառական հարստահարեցոց ցաւերուն ա- մենէն աղէկ Քաղ. ժողովը տեղեկ է : Քաղ. ժողով ըսելով իւր Գիւանատունն ու անոր այսչափ ժամանակէ ՚ի վեր ունեցած հաւա- քումը կը հասկնամ, որուն դուռը՝ օր, վայրկեան չանցնիր որ այդպիսի զանգառներ չը զան բաղխել :

Գաւառական հարստահարութեանց վրայ Ընդհ. ժողովոյ խնդրագիր մը ներկայացաւ, Ընդհ. ժողովը զայն ուղղակի Քաղաքականին զրկել չուզելով Յանձնաժողով մը կազմեց որ իւր տեղեկագիրը բերաւ աստ : Հիմայ խնդիրը գործադրական կէտին հասած է եւ ինչպէս Յըր- բազան Հայր կրտէ՛ ստիպողականութիւնը կը պահանջէ շուտով գործել : Օդաէն էֆ. կակ- նարկէ թէ՛ որ եւ իցէ խնդիր Ընդհ. ժողովը պարտի քննել : սակայն նկատողութեան արժա- նի կէտ մ'է կարծեմ որ, եթէ այդ տեղեկագիրը վիճարանութեան ենթարկի՞ դեռ հինգ վեց նիս- տերով չըկրնար որոշում մ'առնուլ : Ուստի կեր- բորդեմ Սրբազան Հօր առաջարկութիւնն եւ կ'ընեմ թէ՛ Քաղ. ժողովոյ զրկուի տեղեկագիրն, որ Յանձնաժողովոյ հետ միանալով ստիպողական կէտերուն վրայ խորհիլ եւ զանոնք ՚ի դործ դնէ :

ԱԼԱՃԱՃԵԱՆ Զ. էֆ. — Փուճ տեղ ժամաւա- ճառ կը լինիմք. երբ հարստահարութեանց խըն- դիրն հոս բերուեցաւ, ըսողներ եղան թէ՛ ան- միջապէս Քաղ. ժողովոյ յանձնուի, սակայն Սըր- բազան Հայրն հանրագրերը ժողովոյս ներկայացուց

և անոր յանձնեց այս գործը մեծագոյն մասն ալ որոշեցոր՝ Ընդհ. ժողովոյ մէջ ՚ի քննի առնուի այն եւ Պատրիարքարանի սովորական միջոցէն տարրեր միջոց մը մատուի : Ահա որոշում մ'որ Սրբազան Հայրը տան ամիս առաջ բերէ եւ այսօր ինքն ելեր դարձունել կուզէ ուրեմն միայն ատենագրութիւն լեցընել է մեր գործը : Մինչև հիմայ ֆաղ. ժողովը Բ-ճէրէ կընէ եղեր, Ընդհ. ժողովն այս սովորական եղանակէն չըզոհանալով ուրիշ միջոց մը ձեռք առեր է, ուստի՝ ըստ այնմ որոշման՝ պէտք է հոս լուծում առնու այդ խնդիրը :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Կը կրկնեմ եւ ես :
 ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Սրբազան Հայրն իրաւամբ կրտէ թէ՛ գործոց մէջ ժամանակի պատեհութիւնն առաջին նկատելի կէտն է, եւ թէ պարզաները խիստ սլիտի օգնեն այս առաջարկութեան ընդունելութեանը : ուստի հետեւցընելով կառավարիչ որ Յանձնաժողովն եւ այլք հմուտ եւ տեղեակ երեսփոխանք, որք ՚ի Հայաստան են $\frac{1}{2}$ ճամբորդած, միանան փութով ֆաղ. ժողովոյ հետ եւ դարմաններուն վրայ բաակցին : Միւս կողմէ՛ ոմանք կը դիտեն, մասնաւորապէս Ռաֆայէլեան էֆ. թէ՛ քանիոր Ընդհ. ժողովն իր մէջ Յանձնաժողով մ'է կազմեր, եւ անոր տեղեկագիրն է ընդուներ, պէտք է զայն քննէ, հաւանի եւ ապա գործադրութեան տայ այս դիտողութիւնն ալ խիստ իրաւացի է : Սակայն ըստ որում ժամանակն եւ պարագաները յարմար, իմ անձնական կարծիքս ալ՝ Սըրբազան Հօր հետեւելով առիթ չփախցնել է : Այսու ամենայնիւ չմոռնանք յիշելու որ՝ Ընդհ. ժողովն ովսանաններով ընդունեց գաւառացոց հանրագիրը, եւ այն աւուր նստի մէջ՝ շատ մը վիճաբանութիւններէ վերջը՝ մեծագոյն մասի եռանդուն հաւանութեամբ որոշեց խնդիրը հոս ձեռնել եւ ոչ թէ ֆաղ. ժողովոյ յանձնել : Արդ՝ երկու առաջարկութեանց մին որոշել ժողովոյ իմաստութեանը կը յանձնեմ, այսինքն՝ խնդիրը հո՞ս յուզել, թէ Յանձնաժողովն եւ այս մասին հմուտ երեսփոխանք ֆաղ. ժողովոյ հետ միացնել եւ անոնց յանձնել :

Ոմանք ժամանակին պատեհութիւնն ՚ի նկատի կառնուն եւ խնդիրը ֆաղ. ժողովոյ յանձնել կառավարկեն, եւ այլք հին որոշումը պաշտպանել կուզեն, ուստի եւ թեթեւ շշուկ մը կընթանայ ՚ի ժողովն :

Ատենապետ էֆ. բարեկարգութիւնը յարգել

կը հրաւիրէ ժողովն, եւ խաղաղութիւնը կը վերահաստատուի :

ՏՕՔԹ. ՌԱՅԱՏԷԼԵԱՆ ԷՖ. — Կէտ մը կայ որ չհասկցուեցաւ : Տեղեկագիրն ամբողջ սլիտի յանձնուի, թէ հոս մնայիք մասեր կան. վասն զի անոր մէջ դաստիարակութեան եւ եկեղեցական դասուն վերաբերեալ խնդիրներ ալ կան :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Բ. Գրան ներկայանալի մասին վրայ է առաջարկութիւնը :

ՆԱԽԱԳԱՀ ՍՐԲԱԶԱՆ. — Ահա պարզեմ առաջարկութիւնս : Ես կըսեմ որ՝ Ընդհ. ժողովոյ անդամներէն ոչքոր կարող են լոյս տալ միանան ֆաղ. ժողովոյ եւ Բ. Գրան մատուցանելի խնդրոց վրայ խորհին, որոշեն, որպէս զի ժամանակ չանցած թարգմանութեան ձեռնարկուի շուտով :

ՊԵԿԵԱՆ Ք. ԷՖ. — Ըստ իս, խնդրոյն այսչափ ճապարհելուն պատճառը՝ սկիզբէն խտտորնակ ճամբով հոս մտնելն է : խնդիրը դեռ չյուզած Ընդհ. ժողովը պարտէր ֆաղաքակցներն կարծիքն առնուլ : որովհետեւ այսպէս չըրաւ եւ խնդիրն իր մէջ ձեռնեց, ուստի հիմայ զայն ֆաղ. ժողովոյ յանձնելը՝ Ընդհ. ժողովը ֆաղաքականին ենթարկել ըսել է : Ահա մեր սխալանքը : Բայց որովհետեւ սխալեր ենք, դարմանը մտածենք :

Հիմայ պէտք է ֆաղ. ժողովոյ կարծիքն ուզել տեղեկագրին վրայ, եւ ժամանակ չանցընելու համար պէտք է առաջարկել ֆաղ. ժողովոյ որ յաջորդ նստին իւր կարծիքը մեզի ներկայացնէ : Ասանկով թէ Ընդհ. ժողովոյ իրաւունքը չըռնաբարիւր եւ թէ խնդիրը շուտով որոշում կընդունի :

Օրը տարաժամած լինելով արդէն, Ատենապետ էֆ. կը յայտնէ որ ժամանակը չներէր վիճաբանութիւնը շարունակել եւ թէ խնդրոյն որոշումն եկող նստին կը մնայ, եւ անոր գումարման օրին վրայ ժողովոյ կարծիքը կը խնդրէ :

Ժողովն ընդհանուր հաւանութեամբ կորոշէ ութն օրէն նստի գումարիլ :

Ատենապետ էֆ. Արիտակէս Եպիսկոպոսի հրաժարականին քուէարկութիւնն եւ երրորդ բացակայից ըստ օրինի հրաժարման հրատարակութիւնը յաջորդ նստին կը թողու :

Ատենը կը գոցուի ժամը 10 1/2 ին :

ԱՏԵՆԱՊԵՏ Ա. ԱՂԱԲԷԿԵԱՆ ԱՏԵՆԱՊԵՏ Թ. Հ. ՄԵՐԵՏԷՄ-ԳՈՒԼԻ

X

ԳԻՆ 2 ՂՐՈՒՇ

ՍԵՓԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԱԶԳԱՅԻՆ ՄՆՏՈՒԿԻՆ

Կը ծախուի ի Դիւանատան Պատրիարքարանի, և կը՛ղ տնուի
Եկեղեցեաց քանկալները :